ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ»
փակ բաժնետիրական ընկերություն

Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, 0910, ք. Մեծամոր, հեռ./ֆաքս - (37410) 28 06 69, (37410) 28 85 80, կապի օպերատոր - (37410) 73 98 30, էլ.փոստ - anpp@anpp.am, anpp@haek.am

№ E/13/2301-22 առ "17" 10 2022թ.

Ձեր №_____ առ "___" _____ 2022թ.

«ԱԼԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի տնօրեն
Պարոն՝ Սամվել Զաքարյանին
E-mail: all.group@inbox.ru

[Ծանուցում №ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-32/21-01/013 պայմանագրի միակողմանի լուծման վերաբերյալ]

Հարգելի՛ պարոն Զաքարյան,

«Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության կարիքների համար ՀԱԷԿ-ի թիվ 2 էներգոբլոկի սառնարանային մեքենաների կապվածքի պոմպ (այսուհետ՝ ապրանք) ձեռքբերման նպատակով 2021թ. դեկտեմբերի 24-ին հրապարակված «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-32/21» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում, «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի և «ԱԼԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի միջև 2022թ. փետրվարի 17-ին կնքվել է թիվ «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-32/21-01/013» պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ 19600000.80 (տասնինը միլիոն վեց հարյուր հազար ամբողջ ութսուն) ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ) ընդհանուր գնով, որի հիման վրա Ձեր կազմակերպությունը պարտավորվել է Պայմանագրով սահմանված ժամկետում մատակարարել վերը նշված ապրանքը, սակայն սահմանված ժամկետում ապրանքը չի մատակարարվել, ուստի հիմք ընդունելով հիշյալ պայմանագրի 2.1 կետը, այն է՝ գնորդը իրավունք ունի՝

- 2.1.1 ապրանքը սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրացուցային օրից ավելի,
- 2.1.7 միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե էականորեն խախտվել է պայմանագիրը:
- 2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտվել էական է համարվում, եթե՝

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրացուցային օրից ավելի;

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ն միակողմանի լուծում է «ԱԼԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի հետ 2022թ. փետրվարի 17-ին կնքած թիվ «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-32/21-01/013» պայմանագիրը:

Հայտնում ենք նաև, որ չմատակարարված ապրանքի մասով Ձեր կազմակերպության նկատմամբ կկիրառվեն նաև պայմանագրի 6-րդ կետով սահմանված տույժը և տուգանքը:

Գլխավոր տնօրենի տեղակալ-
ընդհանուր հարցերի գծով տնօրեն՝ **Ս.Մաթևոսյան**

Կազմեց՝ Վ. Մանուկյան
ԳԲ 2-րդ կարգի մասնագետ
+374 10 28 29 60